



## “Կանանց աջակցման կենտրոն” ՀԿ

### Մրցույթի Հրավեր

Տեղական և միջազգային փորձագետներ՝ ՀՀ ոստիկանության ընթացակարգերի մշակման և վերանայման համար

«Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ) ծրագիր, որը իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ծրագիրը իրականացվելու է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ յոթ ամսվա ընթացքում (2021 թ-ի Մարտ-Հոկտեմբեր):

Ծրագրի նպատակն է նպաստել պետության կողմից անհրաժեշտ ընթացակարգերի ընդունմանը՝ կանխելու և պաշտպանելու կանանց ԸԲ/ԳԲ-ից և բարձրացնել պետության կարողությունը՝ ԸԲ/ԳԲ-ին արդյունավետ, զգայուն և բազմաբնույթ արձագանքելու համար:

Սույն ծրագրի նպատակն է ուսումնասիրել ԸԲ/ԳԲ-ի վերաբերյալ ոստիկանության ընթացակարգերը՝ «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում Հայաստանում գենդերային բռնության դեմ» (2020-2022 թթ) ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

Ծրագրի համակարգող Մարտ Մաթոսյանի ընդհանուր ղեկավարության և անմիջական հսկողության ներքո, ընտրված փորձագետները պետք է աջակցեն ծրագրի համակարգողին ոստիկանության ընթացակարգերի մշակման և վերանայման

գործընթացում, ներառյալ պետք է ունենան ոստիկանության հետ հանդիպումներ և այս ոլորտի մասնագետների հետ քննարկումներ:

### **ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ընտրված փորձագետները պետք է մշակեն և վերանայեն ոստիկանության ընթացակարգերը և առաջարկեն անհրաժեշտ բարեփոխումներ:

Տեղական փորձագետը պետք է.

- Ուսումնասիրի ոստիկանության ընթացակարգերը
- Քննարկի ընթացակարգերի թերությունները միջազգային փորձագետի հետ
- Առաջարկի և ներկայացնի փոփոխությունները
- Վերջնականացնի և մշակի ոստիկանության ընթացակարգերի փոփոխությունների ամբողջական փաթեթը՝ միջազգային փորձագետի հետ համատեղ:

Միջազգային փորձագետը պետք է.

- Ուսումնասիրի ոստիկանության ընթացակարգերը
- Վերահսկի տեղական փորձագետին
- Առաջարկի և ներկայացնի փոփոխությունները
- Վերջնականացնի և մշակի ոստիկանության ընթացակարգերի փոփոխությունների ամբողջական փաթեթը՝ տեղական փորձագետի հետ համատեղ:

### **Արդյունքներ**

- Մշակել և վերանայել ոստիկանության ընթացակարգերը
- Համագործակցել սոցիալական աշխատողների և փաստաբանների հետ, ովքեր աշխատում են ԸԲ/ԳԲ վերապրած անձանց հետ:
- Համագործակցել պետության և ոստիկանության հետ՝ ընթացակարգերը բարելավելու համար:

Հաղորդակցությունները պետք է լինեն նպատակային, կառուցվածքային և արդյունավետ:

### **ՊԱՀԱՆՁՆԵՐ**

***Տեղական և միջազգային փորձագետները պետք է ունենան:***

ա) Որակավորում ԸԲ/ԳԲ ոլորտում

բ) Առնվազն 5 տարվա մասնագիտական փորձ նմանատիպ ոլորտում

գ) Ոստիկանության հետ ԸԲ ոլորտում աշխատելու փորձ

դ) Հայաստանում ԸԲ/ԳԲ-ին առնչվող մեխանիզմների հետ աշխատելու ունակություն և փորձ

ե) Գենդերային զգայունություն

զ) Տարաբնույթ աշխատանքներ կատարելու, նոր նախաձեռնություններ անելու և ճնշման տակ արդյունավետ աշխատելու ունակություն և փորձ

է) Միջազգային լավագույն փորձի տիրապետում

ը) Գրավոր, բանավոր և միջանձնային գերազանց հմտություններ

Ակնկալվում է, որ տեղական փորձագետը հասանելի լինի ծրագրի ողջ ընթացքում՝ ըստ հաստատված 7-ամսյա ծրագրի, իսկ միջազգային փորձագետը՝ ըստ հաստատված 3-ամսյա ծրագրի:

### **ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Տեղական և միջազգային շահագրգիռ փորձագետները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը/տեղեկությունները .

- Մանրամասն առաջարկ և նախկին փորձի պորտֆոլիո
- Ուղեկցող նամակ, որտեղ ներկայացվում է, թե ինչու եք դուք այս հանձնարարականի համար ամենահարմար թեկնածուն:

Հայտը պետք է ուղարկել [wsc.armenia@gmail.com](mailto:wsc.armenia@gmail.com) էլ. հասցեով, մինչև 2021 թ-ի Փետրվարի 27-ը, ժամը 17:00-ն, որպես վերնագիր նշելով՝ «Ոստիկանության ընթացակարգերի մշակում»:

Հարցազրույցին հրավիրվելու են սահմանափակ թվով թեկնածուներ:

Պայմանագրի մեկնարկի նախնական ամսաթիվը 2021 թվականի մարտի 1-ն է: